Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով Դեղորայքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի 30.10.2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն
Անդամներ
Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**
(Ս. Խաչատրյան)

Հիմք ընդունելով «Դեղաբազա Ե» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկվող դեղորայքի տեխնիկական բնութագիրը 2-րդ չափաբաժնի մասով չէր համապատասխանում հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրին և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելուց հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Դեղաբազա Ե» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունը:

Վերջինիս կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգ է ներմուծվել շտկման ենթակա ապրանքի ամբողջական նկարագիրը, «Դեղաբազա Ե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝ մասնակցի հայտը գնահատել բավարար և ներկայացնել հետագա գնահատման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին

(Ս. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչել

- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ին - **1, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 29, 30, 31, 32, 34, 35, 36, 38-րդ և 44-րդ** չափաբաժինների մասով:
- **«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ**-ին - **42-րդ** չափաբաժնի մասով:
- **«Տոնուս-Լես» ՍՊԸ**-ին - **40-րդ և 47-րդ** չափաբաժինների մասով:
- **«Դեղաբազա Ե» ՍՊԸ**-ին - **2, 28, 41, 43-րդ և 45-րդ** չափաբաժինների մասով:

2.2 ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 20-րդ, 33-րդ, 39-րդ և 48-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև հայտարարել չկայացած 15-րդ, 16-րդ, 17-րդ, 37-րդ, 46-րդ, 49-րդ և 50-րդ չափաբաժինների մասով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**